



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՀՈԿՏԵՄԵՐ, 2017

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 145

#### ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիպի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,  
քու անունդ պիպի օրհնաբանեմ յաիպեանէ յաիպեան:  
Բարեգութ եւ ողորմած է Տէրը,  
համբերաբար եւ սիրով լեցուն:  
Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,  
եւ Կերութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:  
Տէրը հաւաքարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,  
նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:  
Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,  
եւ ուրքի կը կանգնէ բոլոր գորածները:  
Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,  
բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:  
Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,  
անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:  
Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,  
մինչ կորուստի կը մտարնէ բոլոր ամբարիշտները:  
Ես օրհներգութիւն պիպի ընծայեմ Տիրոջ,  
եւ թող ամէն արարած օրհնաբանէ անոր սուրբ անունը  
յաիպեանէ յաիպեան: Ամէն:

#### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոսանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ԱՍՏՎԱԿԵՆ

3:18-22

## ՔՐԻՍՏՈՍԻ ԷԶՔԸ ԴԺՈՒՆՔ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ (3:18-22)

Մեր չարչարանքներուն իբրև օրինակ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքները, որ մէկ անգամուան համար չարչարուեցաւ մեր մեղքերուն համար, արդարը՝ մեղաւորներու համար, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ (18 հմր), Աստուծոյ հետ հաշտեցնէ: Այդ նոյն չարչարանքներուն մասին Պետրոս Առաքեալ այս նամակի սկիզբին անդրադարձաւ ըսելով. «Այս փրկութիւնն էր որ փնտռեցին եւ փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի փրկելիք շնորհքին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ՝ թէ ինչ ժամանակ եւ ինչ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին, որ կանուխէն կը վկայէր Քրիստոսի չարչարանքներուն եւ անոնց յաջորդելիք փառքին մասին» (Ա Պետր 1:11): Այդ Քրիստոս մեռաւ մարմնով, բայց կենդանի մնաց հոգիով, որ արդէն յոյս կը ներշնչէ, որ Քրիստոս յարութիւն առաւ, այսինքն՝ յաղթանակը Քրիստոսի մահուան վրայ: Այս իսկ է ամբողջ միտքն ու նպատակը Աստուածաշունչին: Ահա Քրիստոս իր մահուամբ ոչ թէ պարտուեցաւ, այդ յաղթանակ փարաւ մահուան վրայ, եւ Քրիստոսի մահով, մահը ոչնչացաւ, որովհետեւ Քրիստոս յարութիւն առաւ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Ո՛ր է, մահ, յաղթանակդ, ո՛ր է քու խայթոցդ» (Ա Կորնթ 15:55): «Ապրոք համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ մեռածներուն հաւասարապէս» (Հռոմ 14:9): «Քանի որ այս զաւակները մարդիկ են, մարմինով եւ արիւնով, Քրիստոս Ինքն ալ անոնց նման եղաւ, հաղորդակից՝ անոնց մարդկութեան, որպէսզի իր մահով ոչնչացնէ Մարանան, որ մահուան իշխանութիւնը ունէր, եւ ազատագրէ անոնք՝ որոնք իրենց ամբողջ կեանքին մահուան վախովը կ'անցնէին, սպրուկներու պէս» (Եբր 2:14-15): Այո, Քրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մարմնով, բայց կենդանի մնաց իր յարութեամբ: Այո, որքան ալ չարչարանքը կայ, բայց անոր դիմաց կայ ու պէտք է ըլլայ յարութեան այդ յաղթանակը, որ կը նշանակէ այդ չարչարանքը մնայուն չէ, այդ չարչարանքը ի գուր չէ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Մեր այժմու կրած չարչարանքները ոչ ինչ են զալիք փառքին դիմաց» (Հռոմ 8:18), «Քրիստոսի չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի Իր փառքին եւս մասնակից ըլլանք» (Հռոմ 8:17):

«Ահա նոյն այդ հոգիով գնաց քարոզելու բանփարկուած հոգիներուն, որոնք արեւնօք չհնազանդեցան Աստուծոյ, երբ անիկա ներողամտութեամբ կը համբերէր: Կ'ակնարկեմ Նոյի օրերուն, երբ անիկա փապանը կը շինէր, որով շարքից, միայն ուրջը հոգի ազատեցան ջուրէն» (19-20 հմր): Հեթաբրբրական արտայայտութիւն մըն է որ Պետրոս Առաքեալ կ'ընէ, ասով ցոյց փայլու, թէ անցեալին ով էր գործողն ու ներշնչողը մարգարէները, այս պարագային Նոյը, եթէ ոչ Քրիստոսի հոգին (1:11): Այսինքն, երբ Նոյ պարզամտ սրացաւ Աստուծմէ որ փապան մը շինէ, արիկա ուրիշ բան չէր եթէ ոչ այդ օրերու յարուկ շոշափելի քարոզութիւն այն հոգիներուն, որոնք մեղքի սպրկութեան փակն էին, այն հոգիներուն որոնք բանփարկուած էին մեղքի պարճառով: Եւ Աստուած ներողամտութեամբ համբերեց ու սպասեց անոնց վերադարձը, բայց ափսոս: Աստուած սպասեց մինչեւ փապանին շինութիւնը, 120 փարի, բայց միայն քիչեր, ուրջը հոգիներ ազատեցան: Աստուած անակնկալօրէն չէ որ ջրհեղեղ բերաւ: Աստուած անակնկալօրէն Իր դատաստանը չի փոխեր, այլ՝ ներողամտութեամբ եւ համբերութեամբ կը սպասէ: Պետրոս Առաքեալ պիտի ըսէ. «Աստուծոյ համբերաբարութիւնը փրկութիւն համարեցէք» (Բ Պետր 3:15): Երեսփա մարգարէն 22 փարի շարունակ քարոզեց, պարզամեց, թէ ինչ կը սպասուի այս ժողովուրդին եթէ ապաշխարութեամբ դարձի չգայ: Առաւել եւս, Տէրը պարտուիրեց, որ այս բոլորը ոչ միայն քարոզուին, այլ նաեւ արձանագրուին գալիք սերունդներուն համար, որպէսզի անոնք ալ կարողալով չար ճամբաներէն վերադառնան Աստուծոյ եւ փրկուին:

Այս պարզամը, մանաւանդ՝ յարութեան պարզամը, ու Քրիստոս Հօրը աջ կողը նստաւ, իր իշխանութեան հնազանդեցնելով հրեշտակները եւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու գործութիւնները, Պետրոս Առաքեալ կու փայ իր ժամանակակից, ինչու չէ նաեւ այսօր մեզմէ իւրաքանչիւրին, երբ անոնք որեւէ մէկ պահուն կրնային դէմ յանդիման ըլլալ հալածանքի, սպաննութեան: Ուրեմն, ինչպիսի փիպղոսներ ալ կան, իշխանութիւններ, պետութիւններ, գործութիւններ, փրկութիւններ, այդ բոլորէն գերիվեր է Քրիստոս, ու բոլորը անոր իշխանութեան ենթարկուած են (Եփես 1:21-23): Ինչպէս անցեալին Նոյ իր փապանաշինութեան ճամբով հրաւեր կոչ կ'ուղղէր ժողովուրդին, որ դէպի փապան վազեն փրկուելու համար, այսօր ալ Աւետարանի քարոզութիւնը ուրիշ բան չէ ու պէտք չէ ըլլայ եթէ ոչ դէպի Քրիստոս վազելու որպէսզի փրկուինք գալիք դատաստանէն, ուր Աստուած ներողամտութեամբ կը համբերէ ու կը սպասէ մեր վերադարձը:

Պետրոս Առաքեալ համեմարական մը կ'ընէ ըսելով. «Ասոր ճշմարիտ պատկերն է այժմ մկրտութիւնը, որ ձեզ կը փրկէ՝ ոչ թէ մարմնական աղբը սրբելով, այլ՝ մարդս մաքուր խղճմբանքով Աստուծոյ ընծայելո, Յիսուս Քրիստոսի յարութեամբը» (21 հմբ): Սա կը նշանակէ, թէ միայն մկրտուելով, այսինքն՝ պարզապէս ջուրի մէջ ընկղմումով բաւարար պիտի չըլլայ որպէս փրկութիւն, եթէ երբեք անոր չ'ընկերանար ապաշխարութիւնը, ինչպէս նոյնինքն Պետրոս Առաքեալ պիտի ըսէ. «Ապաշխարեցէք, ձեր ընթացքը փոխեցէք եւ մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուին» (Գործք 2:38): Մէկ այլ առիթով Քրիստոս պիտի ըսէր Նիկողիմոսին. «ջուրէն եւ Հոգիէն չծնիս, չես կրնար Աստուծոյ արքայութիւնը ժառանգել» (Յովի 3): Այո, մկրտութիւնը անհրաժեշտ է, բայց բաւարար չէ փրկութեան համար պարզապէս ջուրին մէջ ընկղմումով: Ուրեմն, ո՛վ է մեզ Աստուծոյ ընծայողը յարուցեալ մեր Տէրն ու Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսը, Իր մահուամբ, թաղմամբ ու յարութեամբ: Անոր համար ալ մկրտութիւնը կը կոչուի «Խորհուրդ» sacrament, որ եկած է լատիներէն բառէ «sacramentum», որ կը նշանակէ երդում ընել, ուխտել հաւապարիմ մնալու: Անոր համար ալ ո՛վ պարարաստ է այդ երդումը ընելու, եւ ինչպէս արդէօք երեխան կրնայ այդ երդումը ընել, վստահ ոչ: Ուրեմն միայն մեծահասակները (կարդայ Գործք 8): Իսկ երեխաներու մկրտութիւնը ի՞նչպէս հասկնալ: Անոր համար ալ մկրտութիւնները որ կը կատարուին, կը կատարուին հաւապքի հիման վրայ, եւ ոչ թէ փրկութիւնը ապահովելու իմաստով: Այդ հաւապքով պէտք է դաստիարակել, այդ հաւապքով պէտք է մեծնայ, որպէսզի կարենայ շարունակել: Ահա գալիք օրերը կու գան ցոյց փալու, թէ որքանով հաւապարիմ մնացինք այդ ուխտն, այդ երդումին:

Ուրեմն, Պետրոս Առաքեալ կու գայ ըսելու եւ կարեւորութեամբ շեշտելու հետեւեալները.

1. Ապաշխարութիւն եւ հաւապք:
2. Քրիստոսի իշխանութիւնը որ կը փարածուի ամենուրեք:
3. Մկրտութիւն եւ հաւապք իրարու հետ սերտ առնչութիւն ունեցող:
4. Յաղթանակը արդէն փարուած է մեզի կը մնայ մասնակից դառնալու այդ յաղթանակին: «Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւապայ, թեպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինձի կը հաւապայ՝ երբեք պիտի չմեռնի: Կը հաւապա՛ս ըսածիս» (Յովի 11:26): Կը հաւապա՛նք Քրիստոսի այս ըսածներուն: